ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1964 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Տ. ՄԱՐՈՒԹՅԱՆ — «ԶՎԱՐԹՆՈՑԸ ԵՎ ԶՎԱՐԹՆՈՑԱՆՄԱՆ ՏԱՃԱՐՆԵՐԸ», ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, 1963

Զվարթնոցը հայ ժողովրդի ճարտարապետական մշակույթի այն հոյակապ կառուցվածքն է, որի մեջ ի մի է բերվել դարեր առաջ մշակված ճարտարապետական կուլտուրան և շինարարական արվեստը, որտեղ հայ հանճարեղ ճարտարապետները դրսևորել են իրենց մտահղացումների սմբողջ վեհությունը։

Վերջերս լույս տեսավ Տ. Մարությանի «Զվարթնոցը և զվարթնոցատիպ տաճարները» գիրքը, որը բաղկացած է երկու հիմնական մասից. առաջինը նվիրված է բուն Զվարթնոցին, իսկ երկրորդը՝ նրան հարող տաճարներին։ Հեղինակը բավականին մանրամասն անդրադառնում է տաճարի առանձին հանգույցներին, տալիս իր մեկնաբանությունները, իսկ որոշ դեպքերում էլ՝ վերակազմությունները։ Աշխատությունն կրում է նաև «Ճարտարապետական բնական տեսարան» ենթավերնագիրը, որտեղից կարելի է եզրակացնել հեղինակի ձգտումը ամփոփել, ի մի հավաքել Զվարթնոցի և նույնատիպ տաճարների մասին եղած կարծիքները ու այդ ֆոնի վրա տալ իր դրույթները։ Սակայն, ցավոք սրտի, հեղինակին չի հաջողվել իրականացնել այդ գովելի ցանկությունը։

Զվարթնոցի ճարտարապետական կերպարի հարցը հետաքրքրել է բազմաթիվ ուսումնասիրողների։ Թորոս Թորամանյանի վերակազմության շուրջը ծավալված վեճերը չեն դադարում ահա շուրջ կես դար։ Հայտնի է, որ Թորամանյանի վերակազմության դեմ արվող առարկությունները հիմնականում վերաբերում են վեր տանող աստիճաններին, վերնահարկին և վերջինիս գոյությամբ պայմանավորվող երկրորդ յարուսի բոտոնդաձև հորինվածքին։

Թորամանյանը Զվարթնոցին նվիրված իր անդրանիկ աշխատության մեջ (1905 թ.) այդ աստիճանները հնարավոր էր համարում տեղավորել արևելյան ուղղանկյուն հավելվածքում։ Սակայն մեկ տարի հետո նա հրաժարվում է այդ ենթադրությունից և հետագա իր բոլոր գործերում արևելյան ուղղանկյուն կառուցվածքը համարելով ավանդատուն, հարց է առաջադրում գտնել դեպի վեր տանող աստիճանների տեղը։ Միաժամանակ Թորամանյանը առանձնակի կրքոտությամբ հերքում էր փայտի աստիճանների օգտագործման հնարավորությունն, առհասարակ։

Այն հանգամանքը, որ տեղում չի պահպանվել դեպի վերնահարկ տանող աստիճանների և ոչ մի հետք և չկա տաճարի ներսում աստիճաններ տեղավորելու և ոչ մի հնարավորություն, ուսումնասիրողներին հիմք էր տալիս հարցականի տակ դնելու վերնահարկի գոյությունը, մանավանդ որ ճարտարապետական այդ էլեմենտը ինքնին վերցրած միանգամայն խորթ էր հայկական ճարտարապետությանը։

Մարությանը փորձելով հիմնավորել վերնահարկի գոյությունը, և ենթադրելով, որ աստիճանները եղել են փայտից (դրա համար էլ իրը չեն պահպանվել), աստիճանները տեղավորում է նրանց արևելյան ուղղանկյուն հավելվածում։ Իր այդ դրույթը հիմնավորելու համար նա բերում է Թորամանյանի միայն առաջին հիշատակությունն աստիճանների տեղաբաշխման մասին, ոչ մի խոսք չասելով ոչ փայտի աստիճանների և ոչ էլ ավելի ուշ շրջանում նրա հայտնած տեսակետների առթիվ։

Մարությանը «հայտնագործում» է փայտի աստիճանները, «գտնում» նրանց այն հետքերը, որոնք ինչպես ինքն է ասում «չէին հայտնաբերվել ոչ Թորամանյանի և ոչ էլ այլ հետազոտողների կողմից»։ Բանն այնտեղ է հանում, որ նա այդպիսի հետքեր է համարում... այն մի քանի անկանոն, կոպիտ փորվածքները, որոնք այսօր էլ կարելի է տեսնել ուղղանկյուն հավելվածքի մեջ առաջացող տաճարի շրջանաձև հիմնատակի եզրամասի վրա։ Նա մանրամասն չափագրում է այդ փորվածքները, տալիս նրանց վերակազմությունը և հայտարարում, որ լուծ-

ված է Զվարթնոցի աստիճանների առեղծվածը։ Սակայն նշված փորվածքները դիտելիս աչքի է գարնում մի խիստ ուշագրավ հանգամանք՝ նրանցից յուրաքանչյուրն ունի 12—15 սմ լայնություն և շատ քիչ խորություն։ Պարզ է, որ ոչ մի դեպքում դրանք չէին կարող հիմնատակ ծառայել այն հաստաբետ գերանների համար, որոնց վրա, ըստ Մարուքյանի, նստել է շուրջ 12 մետր բարձրություն ունեցող աստիճանավանդակը։ Իրականում, հակառակ այս կոնստրուկտիվ անհեթեթության, նշված փորվածքները արված են ոչ թե VII, այլ XX դարում՝ 1919 թվականին, Խաչիկ Դադյանի կողմից, երբ նա արևելյան ուղղանկյուն հավելվածքի փոսորակը վեր էր ածել պահեստի, փայտով ծածկել այն և ավելացրել կիսաշրջանաձև պահարանները։ Ահա թե ինչով է բացատրվում այդ փորվածքների անկանոնությունը և նրանց խիստ փոքր չափերը։ Այդ մասին մեզ պատմեց տաճարի երկարամյա պահակ Աստուր Հովհաննիսյանը, որը ականատես է եղել այդ աշխատանքներին։

Այսպիսով, պարզ է դառնում, որ Զվարթնոցում փայտի աստիճանավանդակի հետքերի «հայտնագործումը» ոչ այլ ինչ է, քան մեղմ ասած թյուրիմացություն։ Ինչպես Գագկաշենում, այնպես էլ այստեղ չի եղել դեպի վեր տանող որևէ աստիճան։ Արևելյան ուղղանկյուն հավելվածը տաճարին ժամանակակից համարելը նույնպես չի հիմնավորված։ Մարուքյանը չի նկատել, որ իր կողմից հիշատակվող շարքերը շարված են կավի շաղախով։

Հավատարիմ իր մեթոդին, Մարուքյանը կանգ է առնում Թորամանյանի վերնահարկի միայն սյունազարդ տարբերակի վրա, ոչ մի խոսք չասելով Թորամանյանի մյուս, հիմնական պահարաններով տարբերակի մասին, որի գծագիրը վերջինս հրատարակել է իր անդրանիկ հոդվածում («Մուրճ», 1905 թ.)։ Այդ տարբերակը ելակետ է հանդիսացել Գագկաշենի վերնահարկի վերակազմության համար։ Մարուքյանն, իհարկե, չէր կարող լիովին բացառել այդ պահարանների գոյությունը, սակայն նա գրում է, որ այդ պահարանները ոչ թե ութ հատ են եղել, այլ ընդամենը երկուսը՝ տեղավորված տաճարի արևելյան կողմում, որոնցից էլ իբր պահպանվել են միայն հարավ-արևելյան պահարանի հետքերը։

Այստեղ առավել արտառոցն այն է, որ Մարուքյանը «հետքեր» է անվանում հսկա զանգվածի ներսում պահպանված պահարանները, որտեղ կարելի է մտնել, տեսնել, շափագրել... Այստեղ հիանալի կերպով պահպանվել է արևելյան կողմի պահարանը, իսկ արևմտյան կողմինի պատերը թեև նստել են, սակայն պարզ և հստակ երևում են նաև այսօր։

Այսպիսով պարզ է դառնում, որ տաճարի հարավ-արևելյան զանգվածում զույգ պահարանների առկայությունը քարը քարի վրա չի թողնում սյունազարդ վերնահարկի մասին եղած Մարուքյանի դրույթը։ Որպեսզի նորից չանդրադառնանք հարավ-արևելյան զանգվածին, անհրաժեշտ է նշել, որ մույթի պահպանված մասը շարունակվել է մինչև արսիդներն ընդգրկող կորագիծ պատը։ Այստեղ չի եղել և ոչ մի կիսաշրջանաձև խորշ (նման առաջին յարուսի կիսաշրջանաձև խորշին), որտեղ Մարուքյանը տեղավորում է վեր տանող փայտի պտուտակավոր աստիճանները։

Մարուքյանը փորձում է տաճարի հարավ-արևմտյան կողմի մեծ զանգվածի վրա պահպանված պահարանի կրաբետոնի հատակի մնացորդները վերնահարկի մասը համարել։ Սակայն այդ հատակը շատ ավելի ցածր է, քան Թորամանյանի կողմից պատկերված վերնահարկի հատակի հնարավոր մակարդակը, մի բան, որն արմատապես ժխտում է նույն այդ պահարանները վերնահարկին վերագրելու բոլոր հիմքերը։ Պահարանների կառուցելակերպը կասկած չի թողնում, որ դրանք հայկական ճարտարապետության մեջ լավ հայտնի թաքստոցներ են, իսկ հարավ-արևմտյան զանգվածի վրա պահպանված կրաբետոնի հատակը ոչ այլ ինչ է, քան նման մի թաքստոցի հատակ։ Վերհիշենք, որ հարավ-արևելյան զանգվածի թաքստոցի մեջ պեղումների ժամանակ, հայտնաբերվեցին եկեղեցական հագուստների փոշիացած մնացորդներ։ Այս վերնահարկի բացակայությունն էլ ինքնին ի դերև է դարձնում Մարուքյանի կողմից ենթադրվող տաճարի երկրորդ յարուսը կազմող, հսկայական բարձրության վրա գտնվող խիստ նեղ և անհարմար տարածություններով կազմված վերնահարկը, ուր ըստ Մարուքյանի այցելուները պետք է բարձրանային... փայտե պտուտակավոր աստիճաններով։ Ինչ փույթ, որ նման վերակազմությունը արմատական հակասության մեջ է գտնվում հայկական ճարտարապետության ամբողջ ուղու հետ, ինչ փույթ, որ նման բան չկա ոչ վրացական, ոչ սիրիական և ոչ էլ բյուզանդական որևէ կառուցվածքում։ Տեղում չկա այդ վերնահարկի գոյությունը ապացուցող որևէ բեկոր, բացի Մարուքյանի ցանկությունից՝ որևէ ձևով «հիմնավորել» երկրորդ յարուսի բոտոնդաձև հորինվածքը։ Մարուքյանին բնավ չի մտահոգում, որ նման լուծման ժամանակ տաճարի ամբողջ կենտրոնական մասը, շուրջը 25 մետր բարձրությամբ, բաղկացած

կլինի սյուներից և կամարաշարքերից։ Իսկ այս ամենը խորթ է հայկական ճարտարապետության տրադիցիոն ձևերին և քարային կոնստրուկցիաներին։

Տաճարի երկրորդ յարուսի բոտոնդաձև պատի գոյությունը Մարությանը փորձում է հիմնավորել նաև մաթեմատիկական հաշվարկների միջոցով։ Սակայն այն մեթոդը, որին դիմում է նա, միանգամայն անթույլատրելի է, արատավոր։ Տարրական մաթեմատիկայից հայտնի է, որ կորի սլաքի և լարի երկարության միջոցով հնարավոր է գտնել աղեղի շառավիղը։ Դժվար չէ կռահել, որ նման հաշվումների ժամանակ առավել կարևորը կորի (սլաքի) ճիշտ որոշումն է։ Բայց տաճարի թիվերից թեև մեզ են հասել բազմաթիվ քարեր, սակայն նրանք ընկնելով մեծ բարձրությունից, խիստ վնասվել են և մոտ մեկ հազարամյակ մնալով հողի մեջ զգալիորեն հողմահարվել են, մաշվել, կորցրել իրենց սկզբնական եզրաձևերի որոշակիությունը։ Բացի այդ, բավական է համեմատել նույնատիպ քարերը, համոզվելու համար, որ սանտիմետրերի տարբերությունը այստեղ սովորական բան է։ Այս պայմաններում Մարությանը փորձում է որոշել թիվերի նախնական շառավիղները առանձին քարերի կորության ճկվածքի (սլաքի) չափերի հիման վրա, երբ 60—70 սմ լարի երկարության ժամանակ այդ չափը չի անցնում 3—6 միլիմետրից։ Ելնելով այս մեթոդից, նրան հաջողվում է գտնել մի քար, որի կորության սլաքը հավասար է 3,3 միլիմետրի և այդ չափը տեղավորելով իր «հրաշագործ» ֆորմուլայի մեջ, ստանում է տվյալ քարի տաշվածքի տրամագիծը (37,12 մետր)։ Դրանից հետո Մարությանը գրում է հետևյալը. «Եվ քանի որ տաճարի առաջին աստիճանի թմբուկն իր վերնամասում ունի 36,06 մետր տրամագիծ, իսկ դուրս կառուցվածքը հավասար է 52—53 սմ, ուրեմն 36,06+2, 0,53—37,12։ Հետևաբար այս քարն անվրեպ պատկանում է տաճարի առաջին աստիճանի թիվին» (էջ 50)։

Նույն ձևով էլ նա գտնում է Թորամանյանի երկրորդ յարուսի օղակաձև պատի թիվի քարերը։ Իմանալով այդ թիվի տրամագիծը (27,22 մ), նա գտնում է մի քար, որի կորը ունի 4,5 մմ սլաք։ Այդ չափը տեղադրելով համապատասխան ֆորմուլայի մեջ, նա սանտիմետրի ճշտությամբ ստանում է այդ քարի տրամագիծը (27,22 մ)։ Այդ երկու քարերի կորերի սլաքների միջև տարբերությունը կազմում է ընդամենը 4,5—3,3=1,2 մմ։ Այս 1,2 մմ տարբերությունն էլ Մարությանին հիմք է տալիս հայտարարելու, որ «Թիվերի բեկորների զգալի մանրամասնությամբ կատարված հետազոտությամբ հաստատվում է, որ Զվարթնոցի երկրորդ աստիճանը եղել է բոլորակ թմբկաձև (էջ 51)։ Նույն միջոցով Մարությանը փորձում է որոշել նաև երկրորդ յարուսի կամարաղեղի քարերի շառավիղները և առանց դժվարության ստանում իրեն անհրաժեշտ թվերը։

Նիստի անկյունը որոշելու հարցում մեր կարծիքով ճիշտ կլինի, եթե ելնենք անկյունային քարի նիստերի միջև եղած անկյան չափից։ Զարդաձևերի դասավորության ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ նրանք քանդակվել են պատը շարելուց հետո։ Այդ պատճառով էլ անկյունային քարերի նիստերի թեքությունը պետք է արտահայտեր պատի նիստերի թեքությունը, որը մեր հաշիվներով ճշտորեն համապատասխանում է առաջին յարուսի սյուների միջև եղած անկյան չափին (156°)։ Այսպիսով մեկ անգամ ևս հաստատվում է այն եզրակացությունը, որ Զվարթնոցում բեավ չի եղել ոչ վերնահարկը, ոչ էլ երկրորդ յարուսը շրջանցող բոտոնդային պատը։

Հաջորդ հանգուցային պրոբլեմը, որը նույնպես սերտորեն կապված է տաճարի ծավալային լուծման հնարավոր ձևերի հետ, դա առանձին կանգնած սյան և կրկնակի կորության թաղերի կառուցելակերպի հարցն է։ Ինչպես նշվել է մինչև այժմ, Թորամանյանի պատկերած հսկա օղակաձև պատը այնպիսի լարվածություններ կառաջացներ աբսիդների կենտրոնական սյուներում և առանձին կանգնած սյուների հանգույցներում, որ նման լուծում չէր կարող թույլատրել VII դարի և ոչ մի ճարտարապետ։ Որպեսզի մեկ անգամ ընդմիշտ վերացնի բոլոր տարակուսանքները, Մարությանը «հայտնագործում» է մի հսկա քարաբետոնյա զանգված, որն իբր դրված է եղել կենտրոնական տեսակետի կամարաշարքերի վրա և իր վրա ընդունելով վերից եկող ամբողջ բեռը հավասարաչափ բաշխել մույթերին և սյուներին։ Որպեսզի պարզ դառնա, թե այն ինչպիսի արմատական հակասության մեջ է գտնվում հայկական ճարտարապետությամբ մշակված շինարարական տեխնիկայի հետ, որքան խորթ է VII դարի մտածված, խորշերով և թաքստոցներով թեթևացված քարային կոնստրուկցիաներին, բավական է ծանոթանալ այդ ահռելի քարաբետոնակուռ զանգվածի չափերին։ Ամենացածր տեղում այդ զանգվածը ունեցել է 2,75 մետր բարձրություն, ամենաարձրում՝ 6,5 մետր, իսկ լայնությունը մույթի մոտ եղել է 5 մետր։

Մարությանը ունի՞ որևէ փաստ այդ զանգվածի գոյությունը հաստատելու համար, ո՛չ, չունի։ Նա հանդում է այդ արտաքոչ փաստերին, արհեստականորեն իջեցնելով կրկնակի կորության թաղերի հենարանները, «չնկատելով» այն մեծ թարմացումները, որոնք գոյություն ունեն նույն այդ կրկնակի կորության թաղերի զանգվածներում։

Մարությանն «Ինժեներական հաշվարկումների մասին» ենթագլխում բերում է դոկտոր-պրոֆեսոր Օգսեն Մապոնջյանի և վաստակավոր շինարար Հարմա Մարգսյանի կարծիքը, որոնք ելնելով Մարությանի ներկայացրած նյութերից և հատկապես կրկնակի կորության թաղերի վերակազմությունից, համաձայնվում են նրա ինժեներական հաշվարկների սկզբունքներին։ Նրանք գրում են. «ԵԹԷ վերևից եկող բեռը փոխանցվում է ներքևի կրող էլեմենտներին (սյուներին, պատերին, մույթերին) միակտուր քարաբետոնակուռ օղակի միջոցով, ապա այդ ուժերը պետք է բաշխվեն ուղիղ համեմատական կրող էլեմենտների կրողունակության» (էջ 69)։

Այս կարծիքը դուցե ճիշտ է և իրավացի այն Զվարթնոցի կոնստրուկտիվ լուծման համար, որը նրանց էր ներկայացրել Մարությանը, և ոչ իրական Զվարթնոցի, որտեղ, ինչպես տեսանք վերը, բնավ չկար այդ հայկական քարաբետոնակուռ զանգվածը և ամեն ինչ լուծված էր հարազատ մնալով VII դարի հայկական ճարտարապետության քարային կոնստրուկցիաների ձևերին։

Մարությանը սխալվում է նաև տաճարի բնդհանուր արամագծի չափագրության հարցում։ Միանգամայն անհիմն է նրա պնդումը, թե տաճարի սիմետրիկ մասերի չափերի միջև եղած տարբերությունները իբր հետևանք են կործանման ժամանակ առաջացած խախտումներին։ Նա հարավոր է համարում կամարաշարքի գոյությունը արևելակողմի աբսիդում, մի բան, որը արմատապես հերքվում է տեղում պահպանված նյութերով։

Գրքի հեղինակը սխալներ և անճշտություններ է թույլ տվել նաև արտաքին պատի, ներքին խաչաթևերի պատերի հաստությունների որոշման հարցերում։ Նա սխալվում է սյուների կառուցվածքի հարցում, չնկատելով, որ մանրահատիկ, ամուր, լավ հղկվող հիալո-տրախիանդեզիտներից պատրաստված են սյուների խարիսխների և խոյակների մի մասը միայն, իսկ առավել պատասխանատու էլեմենտներ հանդիսացող առանձին կանգնած սյուների բները տաշված են սովորական տուֆից։ Արմատապես սխալ են նրա դատողությունները գմբեթի հարցում։ Մարությանը չի նկատում, որ գմբեթատակ օղակի առկայության ժամանակ ի դերև են դառնում նրա հաշիվները 4,5 մետր թռիչք և 2,5 մետր բարձրություն ունեցող արոմպի մասին։

Գրքում առանձին գլուխ է հատկացված տաճարի կործանման ժամանակը և պատճառները որոշելու հարցին։ Այստեղ հիմնական «հայտնագործությունը» կայանում է նրանում, որ Զվարթնոցը իբր ...պայթեցվել է արաբների կողմից, 10-րդ դարի վերջին տարիներին։ Ի՞նչ փույթ, որ ամբողջ միջնադարի ընթացքում հայտնի չէ վառոդի գտագործման և ոչ մի դեպք, ի՞նչ փույթ, որ տաճարի ներսում չի պահպանվել պայթեցման ոչ մի հետք։ Ոչ մի բանի վրա չի հիմնված այն պնդումը, թե արաբ մատենագիր Ալ-Մուկադասին 10-րդ դարի վերջին բբր տեսել է Զվարթնոցը։ Իր ենթադրությունները «հաստատելու» համար Մարությանը նույնիսկ «ուղղում» է Ասողիկին, իսկ Գագիկ առաջին թագավորի կնոջը, Կաղրամիդե թագուհուն դարձնում... հանգուցյալ Սմբատ արքայի կին։

Հազվադեպ չեն նաև գիտական էտիկայի ամենատարրական օրենքների խախտումները։ Բերենք միայն երկու օրինակ։ Տարիներ առաջ Ա. Սահինյանի ուսումնասիրությունները բերել էին այն եզրակացության, որ գմբեթավոր կառուցվածքներում շինարարական մոդուլը հանդիսանում է գմբեթի շառավիղը։ Եվ ահա այժմ Մարությանը նորից է «հայտնագործում» այդ մոդուլը գմբեթավոր կառուցվածքներում և նրա հիման վրա կազմում տաճարի համաչափությունները, «մոռանալով» հիշատակելու Ա. Սահինյանի աշխատությունը։ Մեր վերակազմության նախագծում առաջին անգամ հրատարակել էինք կոնստրուկտիվ հարցերի լուծման տեսակետից խիստ կարևոր մի քանի բարեր, բայց Մարությանի մոտ նույնպես տեսնում ենք դրանք դարձյալ առանց սկզբնաղբյուրի հիշատակության (այն վրա դրվող սեղանաձև բարը, առանձին կանգնած սյան արխիտրավային փոխանցման բարը, մույթի $^3/_4$ սյան խոյակը և խմբաստը, կրկնակի կորության թաղի եզրաշերտի լուսնաձև հանվածքը և այլն)։

Աշխատության մեջ բնավ չեն հիշատակվում Մ. Տեր-Մովսիսյանի գործերը, որտեղ բերված պեղումների մանրամասն նկարագրությունն արտակարգ նշանակություն ունի։ Այստեղ է, որ

---

1 Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկայի հարտարապետությունը, Երևան, 1955, էջ 184։

հրատարակված են ականավոր հարտարապետ Քրիստափոր Տեր-Սարգսյանի տեսակետները, մինչդեռ Մարությանին «հայտնի չէ նման նյութի գոյությունը որևէ տեղ» (էջ 15)։

Մարությանը չի անդրադարձել նաև Ն. Մոսի Դազկաշենի պեղումներին նվիրված հայտնի աշխատություններ, որը մեծ նշանակություն ունի ինչպես Դազկաշենի, այնպես էլ Զվարթնոցի ճարտարապետական ձևերի բացահայտման հարցում։

Խոսելով Զվարթնոցի գմբեթի արտաքին եզրաձևի մասին, հատկապես նշելով պեղումների ժամանակ հայտնաբերված կերամիկ կղմինդրների առկայությունը, Թորամանյանը գրում է, որ Զվարթնոցի գմբեթն արտաքինից զնդաձև է եղել, թեև նույն ժամանակի մյուս հուշարձանների գմբեթները նրա կարծիքով եղել են կոնաձև։ Մարությանը, որպեսզի ապացուցի, որ Զվարթնոցի գմբեթն իրոք եղել է կոնաձև, մի կողմ է նետում Թորամանյանի նախադասության առաջին կեսը, բերելով երկրորդ կեսը միայն, որտեղ ասվում է, թե VII դարի գմբեթները եղել են կոնաձև, և եզրակացնում, որ Զվարթնոցի գմբեթն էլ պիտի կոնաձև լիներ։

Հաջորդ ենթագլուխը հեղինակը վերնագրում է «Փարիզի հարթաբանդակը որպես Զվարթնոցի մոդել»։ Այստեղ նա անդրադառնում է Փարիզի Սեն-Շապել (XIII դ.) տաճարի երկրորդ հարկի զոհաձախողմյան հարթաբանդակներին, որտեղ բիբլիական այլ սյուժեների շարքում առկա է երեք հարթաբանդակ, որոնց վրա պատկերված է նոյան տապանը և նրա հետևում՝ եռահարկ, բոլոնդաձև մի տաճար։ Ըստ Մարությանի այստեղ պատկերված է Զվարթնոցը, որպես Աբրահամ լեռան սիմվոլը և այդ կերպարը XIII դարում Փարիզ է հասել իբր մոդելների և մանրանկարչական նյութերի միջոցով։ Սակայն չի կարելի չնկատել, որ հարթաբանդակները կատարված են հեռանկարային օրենքների հիման վրա և այդ ակնհայտ է մարդկանց և կենդանիների պատկերման մեջ։ Բավական է նայել բուն տաճարի կամարաշարերին, համոզվելու համար, որ այստեղ ևս առկա է բանդակագործի նույն մոտեցումը։ Կենտրոնական կամարներն ավելի լայն են և բանի գնում են դեպի եզրերը, ավելի են նեղանում, փոքրանում։ Այս բանը չի մոռացված նույնիսկ գմբեթի կլոր լուսամուտներում։ Իսկ այս նշանակում է, որ տվյալ ձևով այդ բանդակները չէին կարող XIII դարին պատկանել, կատարված են շատ ավելի ուշ, ոչ վաղ քան XVII կամ XIX դարերում, այն ժամանակ, երբ տաճարը մեծ վերակառուցման էր ենթարկվել և երբ ոչ մի խոսք չէր կարող լինել Դազկաշենի (էլ չենք ասում Զվարթնոցի ձևերի) վերարտադրության մասին։

Բնականաբար հարց է ծագում, եթե դա ոչ Դազկաշենն է և ոչ էլ Զվարթնոցը, կա՞ արդյոք բրիստոնեական աշխարհում մի այլ եռահարկ բոլոնդաձև կառուցվածք, որն անմիջականորեն առնչվեր «սասնո տան» հետ և լայնորեն տարածված լիներ բրիստոնեական աշխարհում։ Պարզվում է, որ կա։ Դա հենց Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված բոլոնդաձև տաճարն է, որի կերպարը սկսած VI—VII դարերից մինչև ուշ միջնադարը և նույնիսկ մեր ժամանակները լայն տարածված է և՛ մանրանկարչության մեջ, և՛ դարդարվեստում։ Նույն օրինակով բազմաթիվ եռահարկ բոլոնդաձև տաճարներ են կառուցվել Արևմտյան Եվրոպայում[2]։

Աշխատության երկրորդ մասը նվիրված է Զվարթնոցատիպ տաճարներին։ Սակայն անակնկալ «նորույթներն» այստեղ ևս ընթերցողին հետևում են ամեն քայլափոխում։ Այսպես օրինակ, մինչև կարելի էր սպասել, որ Զվարթնոցատիպ տաճարների բնութագրման բաժնում ընթերցողը չի գտնի և ոչ մի խոսք... իշխանի տաճարի մասին։ Չէ որ այդ այն հուշարձանն է, որ առ այսօր համարվում է Զվարթնոցի նախատիպը Կովկասում և մասնագիտական գրականության մեջ նրա մասին հայտնվել են խիստ տարբեր կարծիքներ։

Եթե ինչի կարող է հասցնել մասնագիտական գրականության հետ ծանոթ չլինելը, առավել ակնհայտ կերպով երևում է Բոսրայի տաճարին նվիրված ենթագլխում։ Մարությանը Բոսրայի տաճարը հայտնաբերված է համարում 1926 թվականին, այն էլ պեղումների միջոցով, մինչդեռ Վոգյուեն անցյալ դարի երկրորդ կեսին չափագրել էր նրա բարձրադիր պատերը և շուրջը տարածված ճարտարապետական կոմպլեքսը։ Նա ծանոթ չէ նույնիսկ տաճարի ամբողջական հատակագծին, Ա. Յակոբսոնն Ոսկեպարին նվիրված հոդվածին, որտեղ բերված է Բոսրայի հատակագիծը։ Ա. Կուզնեցովից վերցնելով տաճարի կենտրոնական մասի սխեման, Մարությանն այն ներկայացնում է որպես տաճարի ամբողջական հատակագիծ, շուռ տալիս գլխիվայր, իսկ արտաքին պատից դուրս եկող արկղի պատերի մնացորդները պատկերում, որպես չքամուտքի ելուստներ։

---

2 Ս. Մնացականյան, «Մի նոր վկայություն», որ արժանի է հերքման», «Սովետական արվեստ», 1959, № 7։

Հեղինակին հայտնի չէ ընավ, որ կա տաճարի մասին մենագրական գրականություն, բացի 1900 թ. հրատարակված Բուտլերի վերակազմության նախագծից, կան երեք այլ վերակազմության նախագծեր, արված վերջին տասնամյակների ընթացքում (Կրոուֆուտ, Գոլդինգ, Սմիտ)։

Հաջորդ ենթագլուխը նվիրված է Գագկաշենին։ Թվում է, որ նման աշխատության մեջ հեղինակը առանձնակի ուշադրություն պետք է դարձներ այս հուշարձանին։ Այստեղ բացակայում է Գագկաշենի Թորամանյանի կազմած վերակազմության նախագիծը։ Այդ, անշուշտ, պատահական չէ։ Չէ՞ որ այն, ինչ պատկերված է Թորամանյանի վերակազմության նախագծում, արմատական հերքում է Մարությանի դրույթները։ Ըստ Մարությանի Գագկաշենի վերին յարուսները ևս լուծված են եղել ճիշտ այն ձևով, ինչ ձևով որ ինքը պատկերել է Զվարթնոցի իր գծագրերում։

Խառնաշփոթությունների մի ամբողջ շարք է ներկայացնում Կ. Հովհաննիսյանի «Зодчий Трдат» աշխատության[3] որոշ, միանգամայն ճիշտ դրույթների «քննադատությունը», որն ամբողջապես հիմնված է տարբեր դարաշրջանների ոճական առանձնահատկությունների շփոթության վրա։ Բանալի տաճարին նվիրված ենթագլխում Մարությանը բերում է միայն Ս. Կլդիաշվիլու վերակազմությունը, առանց հիշատակելու, որ այդ վերակազմությունը կազմված է եղել միանգամայն սխալ գծագրերի հիման վրա, որոնց հրատարակմանը ժամանակին դեմ է եղել ինքը, Կլդիաշվիլին։ Եվ հենց այդ պատճառով Ե. Թաղլաշվիլին ստիպված է եղել մի նոր արշավախումբ կազմակերպել բաղաքացիական ինժեներ Ն. Կալգինի մասնակցությամբ։

Ի վերջո Մարությանը անդրադառնում է Լյակիտին։ Լյակիտի տաճարի մասին գոյություն ունի բավականին գրականություն. դրանց թվում առանձնակի պետք է նշել տաճարի առաջին ուսումնասիրող Պ. Դ. Բարանովսկու աշխատությունը, որը վաղուց հրատարակված է։ Մարությանը փոխանակ անդրադառնալու սկզբնաղբյուրին, Բարանովսկու աշխատությանը, իր բոլոր եզրակացությունները հիմնել է Կ. Վ. Տրեվերի շարադրանքի վրա։ Հենց այս հանգամանքն էլ նրան հաճախ կանգնեցնում է խիստ զավեշտական իրադրությունների առջև։

Մարությանը իր գրքում բերում է Լյակիտի տաճարի իր չափագրությունը։ Մեզ հայտնի չէ ընավ, թե որ թվին է այդ կատարված, որովհետև մեր չափագրության ժամանակ (1955 թ.) տաճարը ավելի լավ էր պահպանվել, համարյա ամբողջությամբ տոկա էր արևելյան պատի ներսի եզրագիծը ու հարավ-արևելյան ավանդատունը իր կանոնավոր, մեծ աբսիդի հետ միասին։ Մինչդեռ Մարությանը գրում է. «Տաճարի արևելակողմի երկու, ըստ Բարանովսկու իրարանների միայն տաճարին հարող մասերն են պահպանված, իսկ կիսաշրջանաձև արտիդային մասերը, նույնիսկ հիմքերը չկան։ Չկան այդպիսիք բնորոշող բեկորներ։ Դիտնականի կողմից խորանները ձևակերպվում են, ըստ երևույթին, այլ տաճարների նմանողությամբ։ Բայց, չէ որ կարող է այդպես չլինել։ Օրինակ, մեր կարծիքով դրանք եղել են բոլորակ սրահի երկրորդ հարկաբաժին տանող սանդուխքավանդակներ։ Հնարավոր է ենթադրել, որ այդ դուրս ցցված ծավալների միջև, արևելյան կողմից, եղել է տաճարը սպասարկող անձնակազմի սենյակ, ինչպես այդ տիպի մյուս հուշարձաններում» (էջ 198)։

Չենք ժխտում, որ դուցե Մարությանի այցելության ժամանակ այդ ավանդատների «հիմքերն էլ չկային», սակայն ինչպես կարող էր պատահել, որ նա աչքը նկատելիք Կ. Վ. Տրեվերի աշխատության (որի վրա հենվում է նա) 395-րդ էջում տպագրված Լյակիտի ճարտարապետական կոմպլեքսի չափագրությունը, որտեղ հարավ-արևելյան ավանդատունը պատկերված է համարյա թե ամբողջությամբ։ Կասկած չկա, որ այս ամենը Մարությանին անհրաժեշտ էր միայն մեկ նպատակով՝ որևէ կերպ հիմնավորել և ամրացնել Զվարթնոցում իր իսկ հնարած վայտի աստիճանների խախուտ հիմքերը։

Ինչ վերաբերում է Մարությանի կողմից ներկայացված վերակազմության էսքիզներին, ապա նրանցից և ոչ մեկը չի կարող ընդունելի լինել։

Մենք կանգ չենք առնում այն բազմաթիվ մանր խառնաշփոթությունների, միտումնավոր ուղղագրումների և սխալների վրա, որոնք այնքան շատ են ծավալով ոչ շատ մեծ այս գրքում։

Հայկական ճարտարապետության հանգուցային հարցերի նման պարզունակ և միտումնավոր մեկնաբանումը ոչ միայն չի կարող բավարարել այսօրվա պահանջներին, այլև նման գործի հրատարակումը պետք է համարել միանգամայն անթույլատրելի և արատավոր երևույթ։

ՍՏ. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

---

[3] К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951.